

# «ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի առաջին կիսամյակի համար (հաշվետու ժամանակաշրջան՝ 01.01.2026 - 30.06.2026)

Կազմման ամսաթիվ՝ 31.08.2026թ.

### Ամփոփ ներկայացում

2026թ. Ա կիսամյակում Ընկերության հասույթը կազմել է 769,6 մլն դրամ՝ 2025թ. Ա կիսամյակի 2 017,1 մլն դրամի դիմաց (նվազում՝ 61,8%): Նվազումը հիմնականում պայմանավորված է մանրածախ արևային Էներգիայի սուբսիդավորվող հատվածի կրճատմամբ, որը սկսվել է 2025թ. Երկրորդ կիսամյակից և շարունակել է ճնշել ծավալները 2026թ. Ա կիսամյակում (մանրամասն՝ 4-րդ բաժնում):

Չնայած հասույթի նվազմանը՝ Ընկերության շահութաբերության ցուցանիշները Էապես բարելավվել են. համախառն մարժան աճել է 29,9%-ից մինչև 42,8%, ճշգրտված գործառնական EBITDA -ն դարձել է դրական (49,4 մլն դրամ, մարժա՝ 6,4%, ընդդեմ 2025թ. Ա կիսամյակի (-260,2) մլն դրամի): Գործառնական ծախսերի, մասնավորապես՝ աշխատավարձի ֆոնդի, կրճատումը կազմել է մոտավորապես 75,5%՝ գերազանցելով նախկինում հայտարարված 60%-անոց նպատակը:

Սեփական կապիտալը շարունակում է մնալ բացասական (-509,4 մլն դրամ՝ 30.06.2026թ. դրությամբ), իսկ կարճաժամկետ պարտավորությունները գերազանցում են ընթացիկ ակտիվները (-457,5 մլն դրամ): Դեկավարությունը գիտակցաբար չի մեղմում այս հանգամանքը և այն մանրամասն բացահայտում է 8-9-րդ բաժնիներում՝ կապիտալի և իրացվելիության վերականգնման կոնկրետ ծրագրի հետ միասին: Հաշվետու ժամանակաշրջանից հետո Ընկերությունը շարունակել է սպասարկել իր պարտատոմսային պարտավորությունները ժամանակացույցին համապատասխան (հերթական կտրոնային վճարումը կատարվել է 2026թ. օգոստոսի 27-ին): Բացի այդ, Վրաստանում 23,9 ՄՎտ արևային կայանի նախագիծը գործնականում ավարտված է, սակայն դրանից եկամուտը դեռևս չի արտացոլվել սույն հաշվետվության ֆինանսական տվյալներում:

### 1. Ընդհանուր տեղեկություններ

Սույն կառավարման մարմնի միջանկյալ հաշվետվությունը կազմվել է «ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04-ի 19-րդ գլխի պահանջների: Ընկերությունը հանդիսանում է պարտատոմսերի հաշվետու թողարկող և իրականացնում է գործունեություն վերականգնվող Էներգետիկայի, արևային համակարգերի նախագծման, կառուցման և ինժեներական ծառայությունների ոլորտներում: Հաշվետու ժամանակաշրջանն ընդգրկում է 2026թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած վեցամսյա ժամանակահատվածը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ սույն հաշվետվությունում 2025թ. ներկայացված տվյալները (հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքներ) վերաբերում են Ընկերության (ոչ համախմբված) ցուցանիշներին և չեն համընկնում Ընկերության 2025 թվականի կառավարման մարմնի տարեկան հաշվետվությունում ներկայացված համախմբված (խմբի) ցուցանիշների հետ: Սույն հաշվետվությունում ներկայացված բոլոր ֆինանսական ցուցանիշները (2025թ. Առաջին կիսամյակ և 2026թ. առաջին կիսամյակ) վերաբերում են Ընկերության ցուցանիշներին և համադրելի են միմյանց հետ:

Ներկայացված միջանկյալ ֆինանսական հաշվետվությունը աուդիտի չի ենթարկվել:

### 2. Կառավարման մարմինը և պատասխանատու անձինք

Ընկերության կանոնադրությամբ սահմանված կառավարման մարմիններն են՝ Մասնակիցների ընդհանուր ժողովը (Ընկերության միակ մասնակիցը ՀՀ քաղաքացի Հայկ Շեկյանն է, ում պատկանում է կանոնադրական կապիտալի 100%-ը), Տնօրենների խորհուրդը՝ որպես ռազմավարական կառավարման և հսկողության մարմին, և գործադիր մարմինը (տնօրենը)՝ ընթացիկ գործունեության ղեկավարման համար:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո, 2026թ. օգոստոսի 18-ին, Ընկերության միակ մասնակցի որոշմամբ փոփոխվել է Տնօրենների խորհրդի անդամների բանակը և կազմը. վաղաժամկետ դադարեցվել են

խորհրդի նախկին անդամներ Տիգրան Գասպարյանի, Վախթանգ Աբրահամյանի և Հայկ Գրիգորյանի լիազորությունները: Տնօրենների խորհրդի աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով Տնօրենների խորհրդի անդամների քանակը սահմանվել է երեք, և խորհրդի նոր անդամ է նշանակվել Նարեկ Հարությունյանը, մինչդեռ Հայկ Շեկյանը և Սոֆյա Սարգսյանը շարունակում են իրենց լիազորությունները: Արդյունքում Տնօրենների խորհուրդը 2026թ. օգոստոսի դրությամբ գործում է հետևյալ 3 անդամի կազմով.

- Հայկ Շեկյան — խորհրդի նախագահ
- Սոֆյա Սարգսյան — խորհրդի անդամ
- Նարեկ Հարությունյան — խորհրդի անդամ

Ընկերության գործադիր մարմնի (տնօրենի) պաշտոնը շարունակում է զբաղեցնել Հայկ Շեկյանը: Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու անձը Ընկերության ֆինանսական տնօրենն է՝ Սերգեյ Մարությանը:

### **3. Ֆինանսական հաշվետվությունների կազմման հիմքը**

2026թ. առաջին կիսամյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (IFRS) համապատասխան: Հաշվապահական բաղաբանություններում կամ կիրառված գնահատումներում էական փոփոխություններ չեն կատարվել՝ համեմատած 2025 թվականի տարեկան հաշվետվությունների հետ:

### **4. Ֆինանսական արդյունքների գործոնային և համեմատական վերլուծություն**

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական հաշվետվությունները 2025թ. առաջին կիսամյակի և 2026թ. առաջին կիսամյակի կտրվածքով, որին հաջորդում է Ղեկավարության գնահատականը:

#### 4.1. Ֆինանսական արդյունքների հաշվետվություն

| <b>Շտիգեն ՍՊԸ ֆինանսական արդյունքների հաշվետվություն</b>       |                             |                    |                             |                    |
|----------------------------------------------------------------|-----------------------------|--------------------|-----------------------------|--------------------|
| <b>ՀՀ դրամ</b>                                                 | <b>2025 առաջին կիսամյակ</b> | <b>% հասույթից</b> | <b>2026 առաջին կիսամյակ</b> | <b>% հասույթից</b> |
| <b>I. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>                 |                             |                    |                             |                    |
| Հասույթ                                                        | 2,017,098,451               | 100.00%            | 769,599,830                 | 100.00%            |
| Վաճառքի ինքնարժեք                                              | (1,413,010,702)             | -70.05%            | (440,275,643)               | -57.21%            |
| <b>Համախառն շահույթ</b>                                        | <b>604,087,749</b>          | <b>29.95%</b>      | <b>329,324,187</b>          | <b>42.79%</b>      |
| <b>II. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ</b>                                  |                             |                    |                             |                    |
| Իրացման ծախսեր՝ առանց մաշվածության                             | (560,795,964)               | -27.80%            | (127,769,351)               | -16.60%            |
| Վարչական ծախսեր                                                | (308,014,369)               | -15.27%            | (158,359,356)               | -20.58%            |
| Գործառնական այլ եկամուտներ                                     | 4,506,526                   | 0.22%              | 6,223,977                   | 0.81%              |
| Գործառնական այլ ծախսեր                                         | -                           | 0.00%              | (11,643)                    | 0.00%              |
| <b>III. EBITDA</b>                                             |                             |                    |                             |                    |
| <b>Ճշգրտված գործառնական EBITDA (Adjusted Operating EBITDA)</b> | <b>(260,216,058)</b>        | <b>-12.90%</b>     | <b>49,407,813</b>           | <b>6.42%</b>       |
| EBITDA-ի մարժա                                                 | -12.90%                     |                    | 6.42%                       |                    |
| <b>IV. ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ EBIT</b>                               |                             |                    |                             |                    |
| Մաշվածություն և ամորտիզացիա                                    | (26,644,446)                |                    | (46,046,104)                |                    |
| Գործառնական EBIT                                               | (286,860,503)               |                    | 3,361,709                   |                    |
| <b>V. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ</b>                                  |                             |                    |                             |                    |
| Տոկոսային եկամուտ                                              | 43,931,611                  |                    | 44,249,273                  |                    |
| Տոկոսային ծախս                                                 | (86,468,141)                |                    | (92,680,580)                |                    |
| Բանկային և այլ ֆինանսական ծախսեր                               | (3,402,697)                 |                    | (4,578,147)                 |                    |
| Արտարժույթի վերագնահատումից օգուտ/(վնաս)                       | 15,815,309                  |                    | 5,137,584                   |                    |
| Տարադրամի փոխանակումից օգուտ/(վնաս)                            | (8,801,505)                 |                    | (318,813)                   |                    |
| <b>Չուտ ֆինանսական արդյունք</b>                                | <b>(38,925,423)</b>         |                    | <b>(48,190,681)</b>         |                    |
| <b>VI. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՄԵԿԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</b>               |                             |                    |                             |                    |
| Շահույթ բաժնային կապիտալում ներդրումների օտարումից             | -                           |                    | 91,937,425                  |                    |
| Հիմնական միջոցների օտարումից շահույթ/(վնաս)                    | (2,111,356)                 |                    | (18,023,155)                |                    |
| Դիվիդենդներ / ներդրումներից եկամուտ                            | 1,140,000                   |                    | -                           |                    |
| Այլ եկամուտներ                                                 | -                           |                    | 2,958,361                   |                    |
| Արտասովոր եկամուտներ                                           | 1,155,605                   |                    | 785,329                     |                    |
| <b>VII. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ</b>                      |                             |                    |                             |                    |
| Շահույթ մինչև հարկումը                                         | (325,601,677)               |                    | 32,828,987                  |                    |
| Շահութահարկ                                                    | -                           |                    | -                           |                    |
| <b>Չուտ շահույթ</b>                                            | <b>(325,601,677)</b>        |                    | <b>32,828,987</b>           |                    |

#### 4.2. EBITDA-ի համադրման հաշվարկ

| EBITDA-ի համադրման հաշվարկ առաջին կիսամյակներ<br>2026 և 2025թթ.    |                         |                         |
|--------------------------------------------------------------------|-------------------------|-------------------------|
| ՀՀ դրամ                                                            | 2025 առաջին<br>կիսամյակ | 2026 առաջին<br>կիսամյակ |
| <b>A. Հաշվետու EBITDA՝ զուտ շահույթից</b>                          |                         |                         |
| Զուտ շահույթ                                                       | (325,601,677)           | 32,828,987              |
| + Շահութահարկ                                                      | -                       | -                       |
| + Տոկոսային ծախս                                                   | 86,468,141              | 92,680,580              |
| + Մաշվածություն և ամորտիզացիա                                      | 26,644,446              | 46,046,104              |
| <b>Հաշվետու EBITDA</b>                                             | <b>(212,489,091)</b>    | <b>171,555,671</b>      |
| <b>B. Ոչ գործառնական և ոչ կրկնվող ճշգրտումներ</b>                  |                         |                         |
| - Տոկոսային եկամուտ                                                | (43,931,611)            | (44,249,273)            |
| - Շահույթ բաժնային կապիտալում ներդրումների<br>օտարումից            | -                       | (91,937,425)            |
| + Հիմնական միջոցների օտարումից վնաս                                | 2,111,356               | 18,023,155              |
| - Բանկային և այլ ֆինանսական ծախսեր                                 | 3,402,697               | 4,578,147               |
| - FX զուտ արդյունք                                                 | 8,801,505               | 318,813                 |
| - Արտարժույթի վերագնահատումից զուտ<br>արդյունք                     | (15,815,309)            | (5,137,584)             |
| - Դիվիդենդներ                                                      | (1,140,000)             | -                       |
| - Այլ եկամուտներ                                                   | -                       | (2,958,361)             |
| - Արտասովոր եկամուտներ                                             | (1,155,605)             | (785,329)               |
| <b>Ճշգրտված գործառնական EBITDA (Adjusted<br/>Operating EBITDA)</b> | <b>(260,216,058)</b>    | <b>49,407,813.5</b>     |
| EBITDA -ի մարժա                                                    | -12.90%                 | 6.42%                   |

#### 4.3. KPI Dashboard

| KPI (հազ. ՀՀ դրամ)                                         | 2025 առաջին<br>կիսամյակ | 2026 առաջին<br>կիսամյակ | Փոփոխություն       |
|------------------------------------------------------------|-------------------------|-------------------------|--------------------|
| Հասույթ                                                    | 2 017,1                 | 769,6                   | -1 247,5           |
| Համախառն շահույթ                                           | 604,1                   | 329,3                   | -274,8             |
| Համախառն շահույթ մարժա                                     | 29,9%                   | 42,8%                   | 12,8 տոկոսային կետ |
| Ճշգրտված գործառնական EBITDA (Adjusted<br>Operating EBITDA) | -260,2                  | 49,4                    | 309,6              |
| EBITDA-ի մարժա                                             | -12,9%                  | 6,4%                    | 19,3 տոկոսային կետ |
| Գործառնական EBIT                                           | -286,9                  | 3,4                     | 290,2              |
| Զուտ շահույթ                                               | -325,6                  | 32,8                    | 358,4              |
| Զուտ ֆինանսական արդյունք                                   | -38,9                   | -48,2                   | -9,3               |

#### 4.4. Ղեկավարության որակական գնահատականը

Հասույթի կրճատումը 2025թ. Ա կիսամյակի 2 017,1 մլն դրամից մինչև 2026թ. Ա կիսամյակի 769,6 մլն դրամ (-61,8%) համապատասխանում է Ընկերության կողմից 2025 թվականի կառավարման մարմնի տարեկան հաշվետվությունում արդեն բացահայտված միտումին. հասույթի հաջորդական նվազումը սկսվել է 2025թ. երկրորդ կիսամյակից (2025թ. Բ կիսամյակի հասույթը՝ մոտավորապես 1 349,7 մլն դրամ, ընդդեմ Ա կիսամյակի 2 017,1 մլն դրամի) և շարունակվել է 2026թ. Ա կիսամյակում՝ մանրածախ արևային էներգիայի սուբսիդավորվող հատվածի կրճատման հետևանքով, ինչը ոլորտային, համակարգային գործոն է և կապված չէ Ընկերության շուկայական դիրքի կորստի հետ:

Չնայած ծավալային նվազմանը՝ համախառն մարժան աճել է 29,9%-ից մինչև 42,8%, ինչը վկայում է ապրանքային և գնային համադրության բարելավման մասին:

Ճշգրտված գործառնական EBITDA-ն բարելավվել է -260,2 մլն դրամից (մարժա՝ -12,9%) մինչև 49,4 մլն դրամ (մարժա՝ 6,4%)՝ դառնալով դրական:

Չուտ ֆինանսական արդյունքն, ի տարբերություն այլ ցուցանիշների, փոքր-ինչ վատթարացել է՝ -38,9 մլն դրամից մինչև -48,2 մլն դրամ (-9,3 մլն դրամ): Հիմնական պատճառը տոկոսային ծախսի աճն է՝ 86,5 մլն դրամից մինչև 92,7 մլն դրամ, ինչը մասամբ փոխհատուցվել է տարադրամի փոխանակումից վնասի կրճատմամբ:

Ծախսերի օպտիմալացման արդյունքում իրացման և վարչական ծախսերի կազմում աշխատակիցների փոխհատուցումների գումարային մեծությունը 2025թ. Ա կիսամյակի 567,7 մլն դրամից կրճատվել է մինչև 2026թ. Ա կիսամյակի 139,4 մլն դրամ՝ 75,5% կրճատում, որը գերազանցում է Տարեկան հաշվետվությունում հայտարարված 60%-անոց նպատակը:

Վարչական ծախսերի կազմում «Հարկերի գծով ծախսեր» հոդվածի աճը (6,5 մլն դրամից մինչև 61,4 մլն դրամ, +54,9 մլն դրամ) պայմանավորված է ժամկետանց հարկային պարտավորությունների գծով հաշվարկված տույժերով: Հարկային պարտավորությունները կարգավորված են. Ընկերությունը ՀՀ ՊԵԿ-ի հետ կնքել է պարտավորությունների տարաժամկետման պայմանագիր և 2026թ. հուլիս-օգոստոս ամիսներին պարտաճանաչ վճարել է ինչպես Ընկերության ընթացիկ պարտավորությունը, այնպես էլ տարաժամկետման պայմանագրով նախատեսված գումարը:

## 5. Ֆինանսական վիճակ (հաշվեկշիռ)

| Ցուցանիշ (մլն դրամ)           | 31.12.2025 | 30.06.2026 |
|-------------------------------|------------|------------|
| Ոչ ընթացիկ ակտիվներ           | 1 027,9    | 1 055,5    |
| Ընթացիկ ակտիվներ              | 1 648,1    | 2 078,4    |
| Ընդամենը ակտիվներ             | 2 676,0    | 3 133,9    |
| Ընդամենը սեփական կապիտալ      | -542,2     | -509,4     |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | 1 064,4    | 1 107,3    |
| Ընթացիկ պարտավորություններ    | 2 153,8    | 2 535,9    |

2026թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալը կազմել է -509,4 մլն դրամ (31.12.2025թ.՝ -542,2 մլն դրամ): Բարելավումը (32,8 մլն դրամ) ամբողջությամբ պայմանավորված է կիսամյակի զուտ շահույթով. կանոնադրական կապիտալը (100,1 մլն դրամ) մնացել է անփոփոխ: Միաժամանակ ընթացիկ պարտավորությունները (2 535,9 մլն դրամ) գերազանցում են ընթացիկ ակտիվները (2 078,4 մլն դրամ) 457,5 մլն դրամով (31.12.2025թ.՝ 505,7 մլն դրամ): Ընկերության ֆինանսական կայունության ամրապնդման նպատակով Ընկերության ղեկավարությունը մշակում և իրագործում է նոր նախագծեր և ծրագրեր, որոնք քննարկվում են 8-9-րդ բաժիններում:

Ընթացիկ ակտիվների կառուցվածքային փոփոխություններից առանձնանում է ապրանքային մնացորդների աճը (+153,2 մլն դրամ) և առևտրային դեբիտորական պարտքի աճը (+53,8 մլն դրամ), մասամբ փոխհատուցված հումքի ու նյութերի մնացորդի նվազմամբ (-49,1 մլն դրամ):

## 6. Դրամական միջոցներ և իրացվելիության վերլուծություն

2026թ. Ա կիսամյակի ընթացքում Ընկերության դրամական միջոցների մնացորդը նվազել է 96,0 մլն դրամից մինչև 61,9 մլն դրամ (-34,1 մլն դրամ)՝ չնայած կիսամյակի դրական զուտ շահույթին (32,8 մլն դրամ): Ստորև ներկայացվում է հաշվեկշռային հիմնական հոդվածների փոփոխության վրա հիմնված ուղղորդող (ոչ աուդիտավորված) վերլուծություն.

- Իրացվելիությունը «նվազեցնող» գործոններ. ապրանքային մնացորդների աճ (-153,2 մլն դրամ), առևտրային դեբիտորական պարտքի աճ (-53,8 մլն դրամ), տրված երկարաժամկետ փոխառությունների աճ (-69,1 մլն դրամ), կարճաժամկետ բանկային վարկերի մարում (-71,7 մլն

դրամ): Տրամադրված փոխառությունների աճը պայմանավորված է դուստր ընկերությանը տրամադրված փոխառություններով, որն իր հերթին օգտագործվել է Ընկերության խմբի գործունեության համար:

- Իրացվելիություն «ավելացնող» գործոններ. առևտրային կրեդիտորական պարտքի աճ (+96,4 մլն դրամ), ստացված կանխավճարների աճ (+66,5 մլն դրամ), ինչպես նաև այլ կազմակերպություններում Ընկերության բաժնեմասկցությունների օտարումից ստացված 92,0 մլն դրամ: Վերջիններս օգտագործվել են բացառապես Ընկերության գործունեության զարգացման նպատակով:

Ամփոփելով՝ դրամական միջոցների նվազումը հիմնականում պայմանավորված է աշխատանքային կապիտալի աճով (ապրանքային մնացորդներ, դեբիտորական պարտք) և կարճաժամկետ բանկային պարտքի շարունակական մարմամբ, որը մասնակիորեն փոխհատուցվել է պարտավորությունների աճով և ակտիվների օտարումից մուտքերով, այլ ոչ թե գործառնական վնասաբերությամբ:

## **7. Գործառնական միջավայր, հիմնական ռիսկեր և անորոշություններ**

- Շուկայական և ոլորտային ռիսկ — պետական աջակցության մեխանիզմների փոփոխությունը և սուբսիդավորվող հատվածի կրճատումը
- Ֆինանսական և վարկային ծանրաբեռնվածության ռիսկ — բարձր լծակը և դրա սպասարկման ծախսերը
- Իրացվելիության ռիսկ — բացասական աշխատանքային կապիտալի և բացասական սեփական կապիտալի պայմաններում պարտավորությունների ժամանակին սպասարկումն ապահովելը
- Կարգավորիչ և պետական բաղաբաղանդության ռիսկ — ոլորտի կարգավորման հետագա փոփոխությունները
- Գործառնական ռիսկեր — մատակարարման շղթաների, գործընկերների և արտասահմանյան (Վրաստան) նախագծերի իրականացման հետ կապված ռիսկեր

## **8. Անընդհատ գործունեության գնահատում**

Ղեկավարությունն ընդունում է, որ 2026թ. հունիսի 30-ի դրությամբ բացասական սեփական կապիտալը (-509,4 մլն դրամ) և ընթացիկ պարտավորությունների գերազանցումը ընթացիկ ակտիվների նկատմամբ (-457,5 մլն դրամ) հանդիսանում են գործունեության շարունակականության վերաբերյալ Էական անորոշություն առաջացնող գործոններ: Հաշվի առնելով 9-րդ բաժնում ներկայացված միջոցառումները (այդ թվում՝ արդեն իրականացված պարտքի կարգավորումը, ծախսերի կրճատումը, ակտիվների վաճառքից ստացված միջոցները և պարտատոմսերով պարտավորությունների շարունակական ժամանակին սպասարկումը)՝ Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունն ունի իրատեսական հնարավորություն շարունակելու գործունեությունը տեսանելի ապագայում, և հետևաբար սույն միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են անընդհատ գործունեության հիմունքով: Այս եզրակացությունը կախված է 9-րդ բաժնում շարադրված ծրագրի հետագա կատարումից:

## **9. Ֆինանսական կայունության վերականգնման և պարտատոմսերով պարտավորությունների սպասարկման ծրագիր**

Ղեկավարությունը մշակել և իրականացնում է գործողությունների ծրագիր՝ ուղղված շահութաբերության և դրամական հոսքերի կայունության վերականգնմանը:

Նշված ծրագրի հիմնական ուղղություններն են՝

- (ա) «Մասրիկ-1» հաշտության համաձայնագրի կատարում. ամբողջ 149,0 մլն դրամ դրամական հատուցումն ամբողջությամբ ստացվել է (99,5 մլն դրամը՝ ավելի վաղ, մնացած 49,5 մլն դրամը՝ 2026թ. օգոստոսի վերջին), առանձին 289,9 մլն դրամ հատույթից, որն արդեն հաշվառված է 2026թ. Ա կիսամյակի ֆինանսական արդյունքում:

(բ) Բանկային պարտքի վերակառուցում. «Արդշինբանկ»-ի հետ պարտավորությունը վերակառուցվել է 04.06.2026թ.-ին. «Արմավիսբանկ»-ի հետ բանակցությունները շարունակվում են, ավարտն ակնկալվում է մինչև 2026թ. սեպտեմբերի սկիզբ:

(գ) Հարկային պարտավորությունների կարգավորում. Ընկերությունը ՀՀ ՊԵԿ-ի հետ կնքել է ժամկետանց հարկային պարտավորությունների տարաժամկետման պայմանագիր և 2026թ. հուլիս-օգոստոս ամիսներին պարտաճանաչորեն վճարել է ինչպես ընթացիկ պարտավորությունը, այնպես էլ տարաժամկետման պայմանագրով նախատեսված գումարը:

(դ) Ծախսերի օպտիմալացում. աշխատավարձի ֆոնդի փաստացի կրճատում մոտավորապես 75,5%-ով (2025թ. Ա կիսամյակի համեմատ), իրացման և վարչական ծախսերի նվազեցում:

(ե) Կապիտալատար ծրագրերի վերանայում. 80 ՄՎտ հողմակայանի ծրագրի դադարեցում, «Շտիգեն Վենչուրս» ՓԲԸ-ի գործունեության ժամանակավոր դադարեցում: Միևնույն ժամանակ Վրաստանում Ռուսթավիի 23,9 ՄՎտ արևային կայանի նախագիծը գործնականում ավարտված է. դրանից բխող եկամուտը դեռ չի ճանաչվել ֆինանսական հաշվետվություններում և կդառնա Ընկերության համար լրացուցիչ շահութաբերության ու դրամական հոսքի աղբյուր հաջորդ ժամանակաշրջաններում:

(զ) Ոչ շահութաբեր և անարդյունավետ ակտիվների իրացում. 17,011% բաժնեմասի վաճառք «Էներբես» ԲԲԸ-ում և 19% մասնակցության վաճառք «Սոլար-5» ՍՊԸ-ում. 2026թ. Ա կիսամյակում ֆինանսական ներդրումների օտարումից ստացվել է 92,0 մլն դրամ (գրեթե ամբողջությամբ՝ շահույթ), որն ուղղվել է գործունեության զարգացմանը:

(է) Ֆինանսավորման ներգրավում. Ընկերությունը շարունակում է աշխատանքային կապիտալի և ինտեգրված ծրագրերի (արևային Էներգիա, կուտակիչ համակարգեր, ջերմային պոմպեր, ինժեներական ծառայություններ) ֆինանսավորման ներգրավման աշխատանքները:

(ը) Սեփական կապիտալի վերականգնում. միակ մասնակիցը շարունակում է քննարկել Ընկերության լրացուցիչ կապիտալիզացիայի հնարավորությունը. հաշվետու ժամանակաշրջանում փաստացի կապիտալի ներդրում տեղի չի ունեցել:

(թ) Էլեկտրամեքենաների լիցքավորիչների ազգային ցանցի կառուցման ծրագրի իրականացում, որի շրջանակներում նախատեսվում է ներգրավել ներդրումներ՝ մինչև 12 մլն ԱՄՆ դոլարի չափով:

(ժ) EPC (Նախագծում, գնումներ և շինարարություն) նախագծերում ակտիվ մասնակցություն՝ որպես կապալառու ընկերություն, որը փաստում է նաև «Մասրիկ-1» և Վրաստանում 23,9 ՄՎտ արևային կայանի նախագծերի հաջող ընթացքը:

(Ի) Եկամտային բազայի դիվերսիֆիկացում մի շարք ուղղություններով: Այս ուղղությամբ մշակումներն արդեն գտնվում են ներդրման փուլում և արդյունքները կարտահայտվեն արդեն 2027թ. ընթացքում:

## 10. Կարևոր դեպքեր հաշվետու ժամանակաշրջանում

- «Մասրիկ-1» նախագծի հաշտության համաձայնագրի հաստատումը դատարանի կողմից (12.05.2026թ.) և դրա ամբողջական կատարումը, ներառյալ 149,0 մլն դրամ դրամական հատուցման ամբողջական ստացումը 2026թ. օգոստոսի վերջին
- 17,011% բաժնեմասի վաճառքը «Էներբես» ԲԲԸ-ում և 19% մասնակցության վաճառքը «Սոլար-5» ՍՊԸ-ում
- «Արդշինբանկ»-ի հետ պարտավորության վերակառուցումը (04.06.2026թ.)
- ՀՀ ՊԵԿ-ի հետ ժամկետանց հարկային պարտավորությունների տարաժամկետման պայմանագրի կնքումը և դրա պարտաճանաչ կատարումը 2026թ. հուլիս-օգոստոս ամիսներին
- Վրաստանում, ք. Ռուսթավիում, 23,9 ՄՎտ արևային կայանի կառուցման աշխատանքների գործնական ավարտը
- 2026թ. հունիսի 26-ին «Շտիգեն» ՍՊԸ-ն և Shandong Hi-Speed Group-ը ստորագրել են Էլեկտրամեքենաների լիցքավորիչների ազգային ցանցի կառուցման վերաբերյալ շրջանակային համագործակցության համաձայնագիր: Համագործակցության շրջանակներում նախատեսվում է կատարել ներդրումներ՝ մինչև 12 մլն ԱՄՆ դոլարի չափով:

- Պարտատոմսերով հերթական կտրոնային վճարման կատարումը 2026թ. օգոստոսի 27-ին
- Հաշվետու ժամանակաշրջանից հետո՝ 2026թ. օգոստոսին, Տնօրենների խորհրդի կազմի և թվաքանակի փոփոխությունը (տես 2-րդ բաժին)

## 11. Կապակցված կողմերի հետ հարաբերություններ

2026թ. Ա կիսամյակի ընթացքում «ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ-ն իր կապակցված կողմ հանդիսացող ընկերությունների հետ իրականացրել է ընկերության հիմնական գործունեության հետ կապված նյութերի և ապրանքների առք և վաճառք, որոնք համապատասխանաբար 127 մլն և 11 մլն դրամի չափով: Այս գումարներն արտացոլված են հաշվեկշռում որպես կրեդիտորական և դեբիտորական պարտք, ինչպես նաև դուստր ընկերությանը փոխառության տրամադրում, որն իր հերթին օգտագործվել է ընկերության խմբի գործունեության համար:

## 12. Հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

Հաշվի առնելով ՀՀ կառավարության առաջիկա 5 տարվա զարգացման ծրագրում Էներգետիկ ոլորտին տրվող առաջնահերթությունը՝ Ղեկավարությունն ակնկալում է ոլորտի աճի վերսկսում՝ պետական աջակցության նոր ծրագրերի և ներդրումային հետաքրքրության պայմաններում: Ընկերության ռազմավարությունը կկենտրոնանա Նոր Էներգետիկայի և Էներգետիկ անցման՝ արևային, Էներգիայի կուտակման համակարգերի, նոր ծառայությունների, ջերմային պոմպերի, ինժեներական լուծումների, հողմային Էներգետիկայի ոլորտներում, տվյալների կենտրոնների և այլն ուղղություններով զարգացմանը, ինչպես նաև աշխատատեղերի ընդլայնմանը՝ դիվերսիֆիկացնելով իր եկամուտների բազան և նվազեցնելով կախվածությունը շուկայական վայրիվերումներից:

## 13. Պատասխանատու անձանց հայտարարություն

Սույն կառավարման մարմնի միջանկյալ հաշվետվությունը պատրաստվել է ստորև ստորագրող պատասխանատու անձանց լավագույն գիտելիքների և համոզմունքների հիման վրա: Նրանց գնահատմամբ՝ սույն հաշվետվությունը և 2026թ. Ա կիսամյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններն արժանահավատ են ապահովում «ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ-ի գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի, հիմնական ռիսկերի և զարգացման հեռանկարների հավասարակշռված ներկայացումը:

Հայկ Ծեկյան  
Տնօրեն

Սերգեյ Մարության  
Ֆինանսական տնօրեն

